Գիտե՞ք, որ...

Դիզայնը գլխավոր, առավել զարգացած և տեսականորեն հիմնավորված ոլորտ է, որն իրականացվում է գեղեցիկի օրենքներով արվեստից դուրս, և որի նպատակը մարդուն ծառայելն է:

Ծանոթանանք դիզայնի վերաբերյալ տարբեր հետաքրքիր բնութագրիչների:

Դրանցից են՝

- **Դիզայնը** գեղագիտական, մարդկանց և մասսայական օգտագործման ապրանքների, կենցաղի և այլ բնագավառների միջև:
- **Դիզայնը** նկարչություն է, գումարած ինժենեռանախագծում:
- **Դիզայնում** կարևորը գույնն է, գեղեցիկի և տեխնիկայի միասնությունը:
- **Դիզայնը** նյութական միջավայրի ձևավորման նախագծային, գեղարվեստատեխնիկական գործունեության ձև է:
- **Դիզայնը** ոճաբանության, զարգացման և համակցության արվեստ է:
- **Դիզայնը** մեզ շրջապատող առարկաների գեղարվեստական նախագծումն է կամ դրանց արդյունքը:
- **Դիզայնը՝** ըստ հետազոտողների, արվեստ է, կիրառական արվեստ ամենուր:

Այսպիսով, ծանոթանալով դիզայնի տարրերին, կարելի է ենթադրել, որ այս թեման շատ կարևոր դեր է խաղում մարդու գեղագիտական ընկալման, դաստիարակության, ճաշակի զարգացմանը, օգնում է ճանաչել մեզ շրջապատող աշխարհը ըստ նյութի, կառուցվածքի, գույնի, ձևի, չափի: